Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ 226-559 04.10. 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հովհաննես Զոհրաբյանի

«ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ի միջև 2024թ հունվարի 31-ին կնքվել է N N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-7 ծածկագրով դեղորայքի մատակարարման պայմանագիր, որի շրջանակներում «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ին՝ 12.09. 2024թ-ին պատվեր-հայտ է ներկայացվել 37-րդ չափաբաժնի մասով:

Պայմանագրի համաձայն պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, սահմանվում է 20 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն 37-րդ չափաբաժնի մասով մատակարարում չի իրականացվել:

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 18"09.2024թ. ներկայացրած զեկուցագրի համաձայն՝ «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի իրականացրել ապրանքի մատակարարումը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատոն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն առաջարկել է միակողմանի մասնակի լուծել վերոնշյալ պայմանագիրը 15-րդ չափաբաժինների մասով՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա" պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...*"

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով 2024 թվականի սեպտեմբերի 26-ի ՍԱ-543 գրությամբ «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ն հայտով նշված tender@argopharm.am էլեկտրոնային հասցեին ծանուցվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-7 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին և վերջինիս մասին հայտարարությունը 2024 թվականի սեպտեմբեր 26-ին հրապարակվել է https://gnumner.minfin.am/ կայքում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Ուսումնասիրելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագիրը և հաշվի առնելով այն փաստը, որ «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից գրությամբ սահմանված ժամկետում չի իրականացվել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների վճարումը, «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, «ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
			գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	խախտել է գնման գործընթացի շրջանակում պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը պայմանագիրը միակողմանի լուծելու եղանակով	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ	00034929	ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Իսակովի պողոտա 50/3	Պայմանագրի 2.1.7 կետ			04"10.2024թ. N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-7

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների մասնագետ
Հեռ. /010/ 30 30 10 /4/